Հավելված N 1
ՀՀ կառավարության 2010 թվականի
նոյեմբերի 4-ի N 1430 - Ն որոշման

Ն Կ Ա Ր Ա Գ Ի Ր

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՎԱՅՈՑ ՁՈՐԻ ՄԱՐԶԻ «ՋԵՐՄՈՒԿԻ ՋՐԱԲԱՆԱԿԱՆ» ՊԵՏԱԿԱՆ ԱՐԳԵԼԱՎԱՅՐԻ ՍԱՀՄԱՆՆԵՐԻ

«Ջերմուկի ջրաբանական» պետական արգելավայրը գտնվում է Հայաստանի Հանրապետության Վայոց ձորի մարզի հյուսիս-արևելյան մասում, Արփա գետի վերին հոսանքների ավազանում:

Տարածքի ընդհանուր մակերեսը կազմում է 17371.76 հեկտար:

Արգելավայրը հյուսիսից և արևելքից «Ա»-«Բ» սահմանագծով համընկնում է պետական սահմանի հետ, հարավ-արևելքից և հարավից սահմանագիծը «Բ»-«Գ» հատվածով սահմանակից է Հայաստանի Հանրապետության Սյունիքի մարզի Գորայքի գյուղական համայնքին, «Գ»-«Դ» հատվածով՝ Ջերմուկի պետական արգելավայրին, «Դ»-«Ե» հատվածով Ջերմուկի քաղաքային համայնքին, «Ե»-«Զ» հատվածով՝ Ջերմուկի պետական արգելավայրին, հարավ-արևմուտքից «Զ»-«Է» հատվածով՝ Ջերմուկի քաղաքային համայնքին, արևմուտքից «Է»-«Ը» հատվածով՝ Հայաստանի Հանրապետության Վայոց ձորի մարզի Հերհերի գյուղական համայնքին, «Ը»-«Ա» հատվածով՝ Հայաստանի Հանրապետության Վայոց ձորի մարզի Կարմրաշենի գյուղական համայնքին:

«ՋԵՐՄՈՒԿԻ ՋՐԱԲԱՆԱԿԱՆ» ՊԵՏԱԿԱՆ ԱՐԳԵԼԱՎԱՅՐ - ՊԵՏԱԿԱՆ ՍԱՀՄԱՆ ՍԱՀՄԱՆԱԳԻԾԸ՝«Ա»-«Բ»

«Ա»-«Բ» հատվածով՝ սամանագիծը համընկնում է պետական սահմանի հետ:

«Ա» -«Բ» սահմանագծի ընդհանուր երկարությունը 28326.0 մ է:

«ՋԵՐՄՈՒԿԻ ՋՐԱԲԱՆԱԿԱՆ» ՊԵՏԱԿԱՆ ԱՐԳԵԼԱՎԱՅՐ - ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՍՅՈՒՆԻՔԻ ՄԱՐԶ ՍԱՀՄԱՆԱԳԻԾԸ՝«Բ»-«Գ»

Բարձունքի գագաթին գտնվող «Ջերմուկի ջրաբանական» արգելավայրի, Հայաստանի Հանրապետության Սյունիքի մարզի և պետական սահմանի տարածքների բաժանման «Բ» հանգուցային սահմանակետից սահմանագիծը թեքվում է դեպի հարավ-արևմուտք, լանջով՝ N 1 սահմանակետով անցնում 2387.0 մ, հասնում բարձունքի գագաթին գտնվող N 2 սահմանակետին, ապա կրկին թեքվում է դեպի հարավ-արևմուտք, լանջերով՝ N 3-4 սահմանակետերով անցնում 3000.0 մ, հասնում գագաթին գտնվող N 5 սահմանակետին: N 5 սահմանակետից սահմանագիծը թեքվում է դեպի արևմուտք, ապա հյուսիս-արևմուտք, այնուհետև կրկին արևմուտք, լանջով՝ N 6-7 սահմանակետերով անցնում 692.0 մ, հասնում է N 8 սահմանակետին, այստեղից ջրբաժանով թեքվում է դեպի հարավ-արևմուտք, անցնում 258.0 մ, հասնում բարձունքի գագաթին գտնվող «Ջերմուկի ջրաբանական» արգելավայրի, Հայաստանի Հանրապետության Սյունիքի մարզի և Ջերմուկի պետական արգելավայրի տարածքների բաժանման «Գ» հանգուցային սահմանակետին:

«Բ»-«Գ» սահմանագծի ընդհանուր երկարությունը 6336 մ է:

«ՋԵՐՄՈՒԿԻ ՋՐԱԲԱՆԱԿԱՆ» ՊԵՏԱԿԱՆ ԱՐԳԵԼԱՎԱՅՐ - ՋԵՐՄՈՒԿԻ ՊԵՏԱԿԱՆ ԱՐԳԵԼԱՎԱՅՐ ՍԱՀՄԱՆԱԳԻԾԸ՝«Գ»-«Դ»

Բարձունքի գագաթին գտնվող «Ջերմուկի ջրաբանական» պետական արգելավայրի, Ջերմուկի պետական արգելավայրի և Ջերմուկի քաղաքային համայնքի տարածքների բաժանման «Դ» հանգուցային սահմանակետից սահմանագիծը թեքվում է դեպի հարավ-արևելք, ապա հարավ, N 1 սահմանակետով անցնում 368.0 մ, հասնում ձորի եզրին գտնվող N 2 սահմանակետին, որտեղ հատում է ձորը, թեքվում հյուսիս-արևելք, ապա արևելք, ջրբաժանով՝ N 3 սահմանակետով անցնելով 846.0 մ, հասնում է բարձունքի վրա գտնվող N 4 սահմանակետին: N 4 սահմանակետից սահմանագիծը թեքվում է դեպի հարավ-արևելք, անցնում

273.0 մ, հասնում հաջորդ բարձունքի վրա գտնվող N 5 սահմանակետին, ապա թեքվում է դեպի հյուսիս-արևելք, անցնում 307.0 մ, հասնում բարձունքի գագաթին գտնվող N 6 սահմանակետին: N 6 սահմանակետից սահմանագիծը թեքվում է դեպի հարավ-արևելք, լանջերով՝ N 7-10 սահմանակետերով անցնում 1475.0 մ, հասնում «Ջերմուկի ջրաբանական» պետական արգելավայրի, Ջերմուկի պետական արգելավայրի և Հայաստանի Հանրապետության Սյունիքի մարզի տարածքների բաժանման «Գ» հանգուցային սահմանակետին:

«Գ»-«Դ» սահմանագծի ընդհանուր երկարությունը 3269.0 մ է:

«ՋԵՐՄՈՒԿԻ ՋՐԱԲԱՆԱԿԱՆ» ՊԵՏԱԿԱՆ ԱՐԳԵԼԱՎԱՅՐ - ՔԱՂ. ՋԵՐՄՈՒԿ ՍԱՀՄԱՆԱԳԻԾԸ՝«Դ»-«Ե»

«Ջերմուկի ջրաբանական» պետական արգելավայրի, Ջերմուկի պետական արգելավայրի և Ջերմուկի քաղաքային համայնքի տարածքների բաժանման «Ե» հանգուցային սահմանակետից, որը գտնվում է ձորի եզրին, սահմանագիծը թեքվում է դեպի հարավ-արևմուտք, անցնում 766.0 մ, հասնում բարձունքի գագաթի N 1 սահմանակետին, ապա թեքվում է դեպի արևելք, ջրբաժանով, վարելահողերի եզրով անցնում է 811.0 մ, հասնում բարձունքի վրա գտնվող N 2 սահմանակետին, որտեղից էլ թեքվում է դեպի հարավ-արևելք, անցնում 522.0 մ, հասնում «Ջերմուկի ջրաբանական» պետական արգելավայրի, Ջերմուկի պետական արգելավայրի և Ջերմուկի քաղաքային համայնքի տարածքների բաժանման «Դ» հանգուցային սահմանակետին:

«Դ»-«Ե» սահմանագծի ընդհանուր երկարությունը 2099 մ է:

«ՋԵՐՄՈՒԿԻ ՋՐԱԲԱՆԱԿԱՆ» ՊԵՏԱԿԱՆ ԱՐԳԵԼԱՎԱՅՐ - ՋԵՐՄՈՒԿԻ ՊԵՏԱԿԱՆ ԱՐԳԵԼԱՎԱՅՐ ՍԱՀՄԱՆԱԳԻԾԸ՝ «Ե»-«Զ»

«Ջերմուկի ջրաբանական» պետական արգելավայրի, Ջերմուկի քաղաքային համայնքի և Հայաստանի Հանրապետության Վայոց ձորի մարզի համայնքների վարչական սահմաններում

գտնվող տարածքների բաժանման «Զ» հանգուցային սահմանակետից, որը գտնվում է բարձունքի գագաթին, սահմանագիծը թեքվում է դեպի հյուսիս-արևելք, ջրբաժանով անցնում 1616.0 մ, հասնում բարձունքի վրա գտնվող N 1 սահմանակետին, ապա թեքվում է դեպի արևելք, անցնում 369.0 մ, հասնում ձորի եզրին գտնվող N 2 սահմանակետին: N 2 սահմանակետից սահմանագիծը թեքվում է դեպի հյուսիս, լանջով անցնում 1754.0 մ, հասնում ձորերի հատման կետում գտնվող N 3 սահմանակետին, ապա թեքվում է դեպի արևելք, հետո հարավ-արևելք, ձորով անցնում 873.0 մ, հասնում բարձունքի վրա գտնվող N 4 սահմանակետին, որտեղից թեքվում է դեպի հյուսիս, ջրբաժանով անցնում 346.0 մ, հասնում N 5 սահմանակետին: N 5 սահմանակետից սահմանագիծը թեքվում է դեպի հյուսիս-արևելք, լանջով անցնում 623.0 մ, հասնում բարձունքի վրա գտնվող N 6 սահմանակետին, ապա կրկին թեքվում է դեպի հյուսիս-արևելք, ջրբաժանով՝ N 7 սահմանակետով անցնում 1261.0 մ, հասնում բարձունքի գագաթին գտնվող N 8 սահմանակետին, որտեղից թեքվում է դեպի հյուսիս-արևմուտք, N 9 սահմանակետով անցնում 1336.0 մ, հասնում N 10 սահմանա-կետին: N 10 սահմանակետից սահմանագիծը թեքվում է դեպի հյուսիս-արևելք, անցնում 425.0 մ, հասնում ձորի եզրին գտնվող N 11 սահմանակետին, որտեղից թեքվում է դեպի հարավ-արևելք, ձորով՝ N 12-18 սահմանակետերով անցնում 2544.0 մ, ձորի եզրի N 19 սահմանակետին: N 19 սահմանակետից սահմանագիծը թեքվում է դեպի հարավ-արևելք, ապա հարավ-արևմուտք, այնուհետև կրկին հարավ-արևելք, հատում ձորը, ժայռերի եզրով՝ N 20-23 սահմանակետերով անցնում 1560.0 մ, հասնում ժայռի եզրին գտնվող N 24 սահմանակետին, որտեղից թեքվում է դեպի հարավ, հատում ձորը, անցնում 280.0 մ, հասնում ժայռի եզրին գտնվող N 25 սահմանակետին: N 25 սահմանակետից սահմանագիծը թեքվում է դեպի հյուսիս-արևմուտք, ժայռերի եզրով անցնում 864.0 մ, հասնում N 26 սահմանակետին, ապա թեքվում է դեպի հարավ, այնուհետև հարավ-արևմուտք, լանջերով՝ հատելով ձորը, N 27-28 սահմանակետերով անցնում է 2048.0 մ, հասնում բարձունքի գագաթին գտնվող N 29 սահմանակետին: N 29 սահմանակետից սահմանագիծը թեքվում է դեպի հարավ-արևելք, ապա հարավ, բարձունքների

գագաթներով՝ N 30 սահմանակետով անցնում 647.0 մ, հասնում ձորի եզրի N 31 սահմանա-կետին, որտեղ հատում է ձորը, թեքվում դեպի հարավ-արևմուտք, հատելով դաշտային ճանապարհը՝ լանջով անցնում է 719.0 մ, հասնում N 32 սահմանակետին, ապա թեքվում է դեպի արևելք, լանջով անցնում 301.0 մ, հասնում N 33 սահմանակետին: N 33 սահմանակետից սահմանագիծը թեքվում է դեպի հարավ, լանջով անցնում 229.0 մ, հասնում ձորի եզրի N 34 սահմանակետին, ապա թեքվում է դեպի արևմուտք, ձորով անցնում 307.0 մ, հասնում ձորի եզրին գտնվող «Ջերմուկի ջրաբանական» պետական արգելավայրի, Ջերմուկի պետական արգելավայրի և Ջերմուկի քաղաքային համայնքի տարածքների բաժանման «Ե» հանգուցային սահմանակետին:

«Ե»-«Զ» սահմանագծի ընդհանուր երկարությունը 18102 մ է:

«ՋԵՐՄՈՒԿԻ ՋՐԱԲԱՆԱԿԱՆ» ՊԵՏԱԿԱՆ ԱՐԳԵԼԱՎԱՅՐ – ՔԱՂ. ՋԵՐՄՈՒԿ ՍԱՀՄԱՆԱԳԻԾԸ՝«Զ»-«Է»

«Ջերմուկի ջրաբանական» պետական արգելավայրի, Ջերմուկի քաղաքային համայնքի և Հայաստանի Հանրապետության Վայոց ձորի մարզի Հերհերի գյուղական համայնքի տարածքների բաժանման «Է» հանգուցային սահմանակետից սահմանագիծը ձորով թեքվում է դեպի հարավ, ապա հարավ-արևմուտք, ձորի ոլորանների՝ N 1-3 սահմանակետերով անցնում 1272 մ, հատելով ձորակներ՝ հասնում N 4 սահմանակետին: N 4 սահմանակետից սահմանագիծը թեքվում է դեպի հարավ-արևելք, լանջով անցնում 667 մ, հասնում «Ջերմուկի ջրաբանական» պետական արգելավայրի, Ջերմուկի պետական արգելավայրի և Ջերմուկի քաղաքային համայնքի տարածքների բաժանման «Զ» հանգուցային սահմանակետին:

«Զ»-«Է» սահմանագծի ընդհանուր երկարությունը 1939 մ է:

«ՋԵՐՄՈՒԿԻ ՋՐԱԲԱՆԱԿԱՆ» ՊԵՏԱԿԱՆ ԱՐԳԵԼԱՎԱՅՐ - ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՎԱՅՈՑ ՁՈՐԻ ՄԱՐԶԻ ՀԵՐՀԵՐ ՍԱՀՄԱՆԱԳԻԾԸ՝ «Է»-«Ը»

«Ջերմուկի ջրաբանական» պետական արգելավայրի, Հայաստանի Հանրապետության Վայոց ձորի մարզի Հերհերի և Կարմրաշենի գյուղական համայնքների տարածքների բաժանման «Ը» հանգուցային սահմանակետից սահմանագիծը թեքվում է դեպի հարավ-արևելք, ջրբաժանով, N 1 սահմանակետով անցնում 706 մ, հասնում N 2 սահմանակետին, որտեղից թեքվում է դեպի հյուսիս, անցնում 51 մ, հասնում ձորի եզրին գտնվող N 3 սահմանակետին: N 3 սահմանակետից սահմանագիծը ձորով թեքվում է դեպի հարավ-արևելք, ապա հարավ, ձորի ոլորանների N 4-11 սահմանակետերով անցնում 4323 մ, հատելով ձորակներ՝ հասնում Ջերմուկի ջրաբանական արգելավայրի, Ջերմուկի քաղաքային համայնքի և Հայաստանի Հանրապետության Վայոց ձորի մարզի Հերհերի գյուղական համայնքի տարածքների բաժանման «Է» հանգուցային սահմանակետին:

«Է»-«Ը» սահմանագծի ընդհանուր երկարությունը 5029 մ է:

«ՋԵՐՄՈՒԿԻ ՋՐԱԲԱՆԱԿԱՆ» ՊԵՏԱԿԱՆ ԱՐԳԵԼԱՎԱՅՐ - ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՎԱՅՈՑ ՁՈՐԻ ՄԱՐԶԻ ԿԱՐՄՐԱՇԵՆ ՍԱՀՄԱՆԱԳԻԾԸ՝ «Ը»-«Ա»

Բարձունքի գագաթին գտնվող «Ջերմուկի ջրաբանական» պետական արգելավայրի, Հայաստանի Հանրապետության Վայոց ձորի մարզի Կարմրաշենի գյուղական համայնքի և պետական սահմանի տարածքների բաժանման «Ա» հանգուցային սահմանակետից սահմանագիծը թեքվում է դեպի հարավ, ապա հարավ-արևելք, լանջերով՝ N 1-3 սահմանակետերով անցնում 4283 մ, հասնում բարձունքի գագաթին գտնվող N 4 սահմանակետին: N 4 սահմանակետից սահմանագիծը կրկին թեքվում է դեպի հարավ-արևելք, լանջով, այնուհետև ջրբաժանով, N 5 սահմանակետով անցնում 4593 մ, հասնում բարձունքի գագաթի՝ N 6 սահմանակետին, որտեղից ջրբաժանով թեքվում է նույն ուղղությամբ, անցնում 896 մ, հասնում «Ջերմուկի

ջրաբանական» պետական արգելավայրի, Հայաստանի Հանրապետության Վայոց ձորի մարզի Հերհերի և Կարմրաշենի գյուղական համայնքների տարածքների բաժանման «Ը» հանգուցային սահմանակետին:

«Ը»-«Ա» սահմանագծի ընդհանուր երկարությունը 9772 մ է:

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ
ՂԵԿԱՎԱՐ Դ. ՍԱՐԳՍՅԱՆ

Հավելված N 2
ՀՀ կառավարության 2010 թվական
նոյեմբերի 4-ի N 1430 - Ն որոշման

ՀԱՏԱԿԱԳԻԾ

«ՋԵՐՄՈՒԿԻ ՋՐԱԲԱՆԱԿԱՆ» ՊԵՏԱԿԱՆ ԱՐԳԵԼԱՎԱՅՐԻ ՍԱՀՄԱՆՆԵՐԻ



ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ
ՂԵԿԱՎԱՐ Դ. ՍԱՐԳՍՅԱՆ

10_1430